

	Փաստաթղթի անուն	Որակի քաղաքականություն			Լեզու	Հայ.
	Ծածկագիր	POL-001-00-00	Տարբերակ	00	էջեր	1/1
	Կազմում	10.06.2019	Վերանայում	10.06.2022	Հաստատեց	

## Որակի քաղաքականություն

«Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ հանդիսանում է սերտիֆիկացման մարմին, որը մատուցում է ինչպես արտադրանքի, այնպես էլ կառավարման համակարգերի սերտիֆիկացման ծառայություններ:



Մեր առջև դրված նպատակն է հաճախորդներին մատուցել բարձրորակ, արդյունավետ ծառայություններ, որոնք հասանելի կլինեն ինչպես տեղական, այնպես էլ ԵԱՏՄ փարածաշրջանի սպառողների լայն շրջանակի համար: Մասնավորապես մեր նպատակն է.

1. Իրականացնել արտադրանքի համապատասխանության գնահատում ըստ ԵԱՏՄ և ՀՀ տեխնիկական կանոնակարգերի
2. Իրականացնել կառավարման համակարգերի սերտիֆիկացում ISO 9001:2015 և ISO 22000:2018 ստանդարտների պահանջներին համապատասխան:

Հիմնական նպատակին հասնելու համար, «Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ ղեկավարությունը պարտավորվում է՝

- Շարունակաբար բարելավել ամբողջ ընկերության շրջանակներում կառավարման համակարգի աշխատանքի արդյունավետությունը՝ ISO 9001:2015 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան:
- Բավարարել բոլոր հաճախորդների պահանջները՝ առաջարկելով բարձրորակ, արդյունավետ և մատչելի ծառայություններ:
- Հաճախորդների պահանջների բավարարման համար ունենալ պրոֆեսիոնալ և հեղուկական աշխատակազմ:
- Կատարելագործել սպառողի բավարարվածության գնահատման մեխանիզմը և բողոքների վերլուծության համակարգը:
- «Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ աշխատակիցների համար ապահովել այս քաղաքականության ընկալումը:

Հաստատված է՝

Տնօրեն \_\_\_\_\_



Մ. Բարսյան